

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն  
«Վաճառքորդի Հովի. Թունանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»  
ՊՈԱԿ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր

\_\_\_\_\_ Խաչատրյան Գ.Կ.

“\_22\_\_” \_\_10\_\_ 2013թ.

ԿԱՐԳ

ԴՊՌՈՑԱԿԱՍՆԵՐԻ ԱՍՄՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ,  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ

Ընդունվել է «ՎՊՄԻ »ՊՈԱԿ-ի գիտխորհրդում  
արձանագր. թիվ \_\_9\_\_ “\_25\_” \_\_10\_\_\_\_ 2012թ.

Փոփոխված է՝ ՎՊՄԻ ՊՈԱԿ գիտխորհրդի նիստում  
(արձանագրություն թիվ 8 . “\_26\_” \_09\_\_\_\_ 2013թ.)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը սահմանում է Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի համայնքների դպրոցների IX-XII դասարանների աշակերտների շրջանում ասմունքի մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման ընթացակարգը (այսուհետ՝ Կարգ):

## II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Մրցույթի անցկացման հիմնական նպատակներն են.

- օժտված դպրոցականների բացահայտումը, նրանց մասնագիտական կողմնորոշմանը նպաստելը,
- դպրոցականների ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը նպաստելը,
- ընթերցանության, պոեզիայի նկատմամբ հետաքրքրության բացահայտումը և զարգացումը,
- գրականության, գրքի միջոցով դպրոցականների մշակութային դաստիարակությանը նպաստելը:

2.2. Մրցույթի անցկացման հիմնական խնդիրներն են.

- հնարավորություն ընձեռել դպրոցականներին դրսևորելու իրենց կարողությունները՝ գեղարվեստական խոսքի ներկայացման միջոցով,
- խթանել աշակերտների հետաքրքրությունն ընթերցանության, մասնավորապես, պոեզիայի նկատմամբ,
- նպաստել հոգևոր, բարոյական զգացմունքների զարգացմանը, գեղագիտական և գրական ճաշակի ձևավորմանը:

## III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Մրցույթին կարող են մասնակցել Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի այլ համայնքների պետական և ոչ պետական հանրակրթական դպրոցների ու վարժարանների IX–XII դասարանների աշակերտները:

3.2. Մրցույթի կազմակերպման, մեթոդական ապահովման, ելույթների քննարկման, հաղթողներին և մրցանակակիրներին որոշելու նպատակով մրցույթի անցկացման ժամկետից առնվազն 1,5 ամիս առաջ Ինստիտուտի ռեկտորի հրամանով ստեղծվում է կազմկոմիտե:

3.3. Մրցույթի անցկացման ժամկետից առնվազն 1 ամիս առաջ կազմկոմիտեն նամակներով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում է մարզի դպրոցներին կազմակերպվող մրցույթի մասին՝ նշելով մրցույթի անցկացման ստույգ ժամկետը և անհրաժեշտ պայմանները: Անցկացվող միջոցառման մասին տեղեկատվություն է տեղադրվում նաև Ինստիտուտի կայքում

3.4.Մրցույթի անցկացման ժամկետից առնվազն 1 ամիս առաջ կազմկոմիտեն նամակներով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում է մարզի դպրոցներին կազմակերպվող մրցույթի մասին՝ նշելով մրցույթի անցկացման ստույգ ժամկետը և անհրաժեշտ պայմանները: Անցկացվող միջոցառման մասին տեղեկատվություն է տեղադրվում նաև ինստիտուտի կայքում:

3.5. Հայտարարված ժամկետից հետո մասնակցության հայտեր չեն ընդունվում:

#### **IV. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԸ**

- 4.1. Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու մեկ ստեղծագործություն :
- 4.2. Մրցույթն անցկացվում է մեկ փուլով, կախված մասնակիցների թվից:
- 4.3. Մրցույթի մասնակիցների ընտրությունը կատարվում է ուսուցչական կոլեկտիվների կողմից՝ հաշվի առնելով սույն կանոնակարգում ամրագրված դրույթները:
- 4.4. Մրցույթին մասնակցելու համար յուրաքանչյուր դպրոցից կարող է առաջադրվել մինչև 4 կատարող:
- 4.4. Մրցույթի արդյունքների քննարկումը և ամփոփումը կատարվում է յուրաքանչյուր փուլից հետո:

#### **V. ԱՍՄՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՍԻՇՆԵՐԸ**

5.1. Ասմունքի գնահատման հիմնական չափանիշներն են.

- ստեղծագործության ընտրությունը 4 միավոր
- ասմունքողի գեղարվեստական խոսքի կուլտուրան՝ 8 միավոր
- խոսքի տեխնիկան 5 միավոր
- բենական նշակույթը 3 միավոր

5.2. Ասմունքը գնահատվում է հանձնաժողովի կողմից 20-քալանոց համակարգով:

5.3. Վերջնական գնահատականը ձևավորվում է որպես հանձնաժողովի անդամների կողմից վերոնշյալ չափանիշներով նշանակված գնահատականների միջին թվաբանական:

#### **VI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ**

- 6.1. Մրցույթի հաղթող են համարվում այն դպրոցականները, որոնց ասմունքը գնահատվել է 18-20 միավոր ( I տեղ),
- 6.2. Մրցանակային հաջորդ տեղերի միավորներն են.  
I տեղ՝ 15-17 միավոր,  
II տեղ՝ 12-14 միավոր:
- 6.3. Մրցութային հանձնաժողովի որոշմամբ առանձին մասնակիցներ կարող են արժանանալ հատուկ մրցանակի:

6.4. Մրցույթի հաղթողը և մրցանակների արժանացած դպրոցականները պարզեցվում են դիպլոմներով, շնորհակալագրերով և հուշանվերներով:

6.5. Մրցանակների հանձնումը կատարվում է մրցույթի ավարտից հետո 15 օրվա ընթացքում: